Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն
2024թ. ապրիլի 22-ից ապրիլի 26-ը ք. Տիրանա
(Ալբանիա) գործուղման արդյունքների մասին

1.Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը

Լիլիթ Ղազարյան - ՀՀ ՊԵԿ ԱՏԳ մաքսային սպասարկման և հսկողության վարչության դասակարգման և մաքսասակագնային հարցերով մասնագիտական կենտրոն-բաժնի բաժնի գլխավոր մաքսային տեսուչ

Արմենակ Մելքոնյան - ՀՀ ՊԵԿ ԱՏԳ մաքսային սպասարկման և հսկողության վարչության դասակարգման և մաքսասակագնային հարցերով մասնագիտական կենտրոն-բաժնի բաժնի գլխավոր մաքսային տեսուչ

2. Գործուղման վայրը և ժամկետները՝

Ալբանիա, ք. Տիրանա, ապրիլի 22-ից 26-ը

3. Հրավիրող կողմը՝

ՄԱԿ-ի Շրջակա միջավայրի կազմակերպություն (UNEP) և Ալբանիայի զբոսաշրջության և շրջակա միջավայրի նախարարություն

4. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)՝

Գործուղման նպատակն էր՝

1"Կանխել Մոնրեալի արձանագրության և դրա Կիգալիի փոփոխության ներքո հսկվող օզոնային շերտը քայքայող ու գլոբալ տաքացման ֆտորացված նյութերի այնպես էլ բնապահպանության ոլորտում անօրինական անցանկալի առևտուրը,

2"Քննարկումների և շնորհանդեսների միջոցով հանդիպման ընթացքում ձեռք բերել ոլորտի արդի վիճակի վերաբերյալ տեղեկատվություն, փորձի փոխանակում,

3"Ընդլայնել բազմակողմանի համաձայնագրերի ներքո ձևավորված «Կանաչ Մաքսատուն» նախաձեռնությանը համագործակցելու միջոցով լրացնել և ընդլայնել մաքսային ծառայողների պատրաստմանն ու վերապատրաստմանն ուղղված ջանքերը:

5. Քննարկված թեմաները՝

Ս.թ. ապրիլի 23-ից մինչև ապրիլի 25-ը կայացած միջոցառման ընթացքում քննարկվել են հետևյալ թեմաները.

1) 23. 04.2024թ.

- Միջազգային իրավիճակի ընդհանուր բնութագիրը, հակիրճ Մոնրեալի արձանագրության և դրա իրականացման հետ կապված նախաձեռնությունների, սեմինարների ու որոշումների մասին,
- Հոդված 5-ի երկրների կարգավորիչ շրջանակի ուժեղացում՝ կապված HCFC-ների և HFC-ի վրա հիմնված սարքավորումների ներմուծման հետ,
- ԱՀԿ կիրարկման ցանցեր, ՆՀ-ի գործիքները և վերահսկվող նյութերի (ներառյալ խառնուրդների) ծածկագրերը
- Առևտրի հսկողությունը՝ վերանայված F-գազերի ԵՄ կանոնակարգին համապատասխան
- Եվրոպական քիմիական արդյունաբերության խորհուրդի (CEFIC), Եվրոպական ֆտորածխածնային տեխնիկական կոմիտեի (EFCTC) նախաձեռնությունները, տեղեկատվության հավաքումը և տարածաշրջանային համագործակցությունը,
- Իսպանիայի քաղաքացիական գվարդիայի աշխատանքը՝ կապված Մոնրեալի արձանագրության հետ,
- Եվրոպոլի դերը տեղեկատվության փոխանակման, գործառնական գործունեության, ֆինանսական գործիքների և EMPACT-ում
- ECA-ում RILO-ի մասնակցության ցուցադրություն, տվյալների բազայում վերահսկվող քիմիական նյութերի հաշվետվություն,
- Սառնագենտի օգտագործումը, նույնականացում, բացատրություն և ցուցադրում,
- Մոնրեալի արձանագրության քարտուղարությունների ճեպազրույցը, տվյալների հաղորդման, համապատասխանության և առաջիկա խնդիրների վերաբերյալ
- Գործադիր կոմիտեի 92-րդ և 93-րդ նիստերի հիմնական որոշումները
- Փակ երկխոսություն Լեհաստանի և Թուրքիայի միջև (Աջակցություն. OLAF, Կլիմայի գործողությունների գլխավոր տնօրինություն, ԱՀԿ):

2) 24. 04.2024թ.

- Թուրքիայում Մոնրեալի արձանագրության հետ կապված օրենսդրությունը և մաքսային ընթացակարգերը,
- Լիագումար նիստ բոլոր ոչ ԵՄ երկրների համար, բացի Թուրքիայից,
- Փակ երկխոսություն ԵՄ-ի և Թուրքիայի միջև (Փորձագիտական խումբ և համակարգող. OLAF, Կլիմայական գործողությունների գլխավոր տնօրինություն, ԱՀԿ),

- Ներածություն «Կանաչ մաքսատուն» նախաձեռնության վերաբերյալ (Մոնրեալի արձանագրության հետ կապված մաքսային և իրավապահ մարմինների աշխատակիցների համար),
- Մաքսային ծառայությունների ստանդարտ գործառնական ընթացակարգերի (ՍԳԸ) մշակում,
- HFC լիցենզավորման/քվոտայի համակարգ և միանգամյա օգտագործման բալոնների արգելք,
- Զուգահեռ սեղանային խմբակային պարապմունքներ՝ մաքսային և իրավապահ մարմինների աշխատակիցների համար,
- Գործակալությունների ակնարկներ և առաջարկներ (Մոնրեալի արձանագրության բաժին, Ալբանիա Համաշխարհային բանկ, UNIDO Մոնրեալի արձանագրության խումբ, ECA ցանցի գործունեությունը, կարիքները և առաջնահերթությունները կլոր սեղան),
- Այցելություն Դուրեսի մաքսային նավահանգիստ:

3) 25.04.2024թ.

- Ազգային փորձի փոխանակում (Խորվաթական մաքսատան դերը շրջակա միջավայրի պաշտպանության գործում (ռիսկերի պրոֆիլավորում և առգրավման դեպքեր)),
- Եվրասիական միությունում վերահսկվող նյութերի ինտերնետ առևտուր և հաջողված iPIC դեպքեր Հայաստանում,
- Հայաստանի մոտեցումները մաքսային ծառայողների պատրաստման, վերապատրաստման հարցերին,
- CSW CERTEX մեկ պատուհանի կիրառում՝ F-գազերի և ՕՔՆ-ի մաքսային համակարգի համար,
- Մաքսային համագործակցությունը, ուսուցումը և մեկ պատուհանի համակարգը,
- Կոնտակտային խումբ մաքսային և իրավապահ մարմինների աշխատակիցների համար,

Ճեպազրույց ԱՀԿ պլանավորված «Դեմետեր X» գործողության վերաբերյալ

- Փոքր խմբային քննարկումներ Մոնրեալի արձանագրության հանձնակատարների համար,
- **Դասեր քաղված Դեմետր IX օպերացիայից և Մաքսային և իրավապահ մարմինների համաշխարհային մրցանակից,**
- Ռումինիայում, Բուլղարիայում անօրինական առևտրի դեպքերից քաղված դասեր,
- Կլոր սեղան ապօրինի առևտրի, մաքսանենգության սխեմաների և հետախուզական տվյալների հավաքագրման դեպքերի վերաբերյալ,

- Սեղանի շուրջ խմբային աշխատանք՝ կապված հանդիպման առաջարկությունների, ձևավորված հետադարձ կարծիքի հետ:

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

Տիրանայում անցկացվող միջոցառմանը մասնակցել են Մոնրեալի արձանագրության քարտուղարության ներկայացուցիչները, Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի տարբեր պետությունների ներկայացուցիչներ, այլ կառույցներից՝ վարչարարության համար պատասխանատու անձինք:

Միջոցառման շրջանակում կազմակերպված քննարկումների և նիստերի ընթացքում մասնակիցները քննարկել են կայուն զարգացման նպատակների, լծակների կիրառության, սերնդեսերունդ ժառանգվող կլիմայի փոփոխությունների դեմ պայքարը և այլ թեմաներ:

Հանդիպումներից երկուսի ընթացքում շնորհանդեսներով հանդես է եկել նաև ՀՀ ՊԵԿ պատվիրակը: 24.04.2024թ. նրա կողմից ներկայացվեց «Կանաչ մաքսատուն» նախաձեռնություն թեմայով ներածական ուսուցումը և Բազելի և Մոնրեալի կոնվենցիաները, իսկ 25.04.2024թ.՝ «Ուսումնական կենտրոն» ՊՈԱԿ-ը և նրա գործունեությունը:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝

Հանդիպման ընթացքում որոշումներ չեն ընդունվել, պայմանավորվածություններ ձեռք չեն բերվել և փաստաթղթեր չեն ստորագրվել:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները՝

ՀՀ ՊԵԿ կողմից մշտապես բարձր է գնահատվել և գնահատվում միջազգային տարբեր հարթակներում գործընկեր երկրների մասնագիտական կառույցների հետ ոլորտային քննարկումների անցկացումը, մասնավորապես, մաքսային ոլորտում արդիական և նորարական մեխանիզմների ներդրումը:

Միջոցառմանը մասնակցելը թույլ տվեց ՊԵԿ ներկայացուցիչներին վերանայել ՀՀ ՊԵԿ-ում կատարվող համապատասխան աշխատանքների որակը, նույնականացնել լավագույն միջազգային փորձը՝ ՀՀ-ում ներդրնելու նպատակով, ներկայացնել և ավելի ճանաչելի դարձնել Հայաստանի փորձը միջազգային փորձագիտական հանրույթում, հաստատել միջազգային կապեր համապատասխան ոլորտի օտարերկրյա գործընկերների և փորձագետների հետ, ինչպես նաև այլ պետությունների փորձագետների հետ համագործակցելու միջոցով

հնարավորություն տրվեց լրացնել և ընդլայնել մաքսային ծառայողների պատրաստմանն ու վերապատրաստմանն ուղղված ջանքերը:

9. Ստորագրությունը, ամսաթիվը

Լիլիթ Ղազարյան

Արմենակ Մելքոնյան

30.04.2024թ.